

ՀԱՍՏԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄԱՍԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կես տարվանը 6 ռուբլ:
Առանձին համարները 5 կոպեկով:
Թիֆլիսում գրվում են միամյա խմբագրատան մէջ:
Օտարաբաղադրացիք դիմում են ուղղակի
Тифлис. Редакция «Маск»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից):
Ցայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով:
Ցայտարարութիւնների համար վճարում են
խւրաքանչիւր բառին 2 կոպեկ:

ՀԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

„ՄԱՍԿ“

ԱՄԵՆՈՐԵԱՅ ԼՐԱԳՐԻ:

Գե. և մարտ ամսին գրվելով, բաժա-
նորները կարող են ստանալ „ՄԱՍԿ“ բո-
լոր համարները, առաջին համարից սկսած:
„Մշակ“ տարեկան գինը 10 ռուբլ է:
Թիֆլիսում համարը հատով առնել կա-
րել է 5 կոպեկով:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Կաթողիկոսական խնդիր:—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒ-
թիւն: Նամակ Բուխարայից:—ԱՐՏԱՔԻՆ ՏԵ-
սոթիւն: Արտաքին լուրեր:—ՀԵՌԱՐԻՆԵՐ:—
ԹԱՅԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ: Նա-
մակ Թիբեթից:

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԽՆԴԻՐ

Այժմ, երբ Հայ-լուսաւորչական եկեղե-
ցու գլուխը, վեհապառ կաթողիկոսը, վախ-
ճանվել է և էջմիածին կաթողիկոսական ա-
թոռը թափուր է մնացել, երբ Հայոց ազ-
գի մեծամասնութիւնը, լուսաւորչական կը-
րծին պատկանողները, պէտք է ընտրեն մի
նոր հոգեւոր գլուխ,—մասնւի պարտակա-
նութիւնն է, ինչ բանակին և պատկանէր
նա, իր կարողութեան չափ, աչքի առնել
ազգի մեծամասնութեան համար այդ նշա-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆԱՄԱԿ ԹԻՐԻՔԻՍՅՈՅՑ

Կ. Պօլս, 17 փետրվարի

Անցեալ նամակով հարցրեցիք թէ՛ Կիլիկիոյ
կաթողիկոսին և Հայեցի ամբիկոսան դեր-հիւպա-
տին միջև անհամաձայնութիւն մը ծագել է:
Հայեցի «Մասիս»-ի թղթակցութիւն մը հետե-
ւան անդիկութիւններն կուտայ այս կարեւոր հար-
ցի վրայ, որ դուք նորանոր դժուարութեանց տե-
ղի տալ: Հայեցի դատաւին Ղեւոնդ և Նազուկեան
անուն գիւղօրէից մէջ զմտուող հայ ժողովրդեան
մի մասը լատինական կրօնը ընդունելու քանի մը
տարի առաջ, առաջնորդութեամբ Մետրոպոլիտան
քահանայի մը: Երուսաղէմի լատին կրօնաւորնե-
րը ընկեր տուել են Մետրոպոլիտան քահանային Մէն-
դուր անուն կրօնաւոր մը: Ղեւոնդ և Նազուկեան
հայոց համար: Այս երկու հովիւները ֆրանսիա-
կան հիւպատին կողմնելով չարաչար կը տառա-
պնեն հայ դիւղայիցները: Մէնդուր և Նազուկեան
լուրէ եղեր հայոց թէ՛ միջինն որ լատին չըլլար
մը պիտի ազատէր իմ ձեռքէն: Կառավարիչը, ձե-
միւրաշան կողմնակցութիւն կընէ լատինաց: Սա-
կան կաթողիկոսի թախանձանայ մը ձեռքէն լա-
ւաշ կը համոզուի թէ քաղաքականապէս օգուտ
է տեղութեան կողմնակցի ըլլալ հայոց: Ասոր
հետեւութիւնը կըլլայ լատին կրօնաւորին Հայեցի
փախելը: Սակայն այս կրօնաւորը դարձեալ վե-
րադարձել է Ղեւոնդ մասնաւորապէս Ամբիկոսի
դեր-հիւպատի չնորհիւ: Այդ կրօնաւորը կը ստակա-
ցուանէ իր բարարարութիւնները, և կը յայտա-
բարէ եղեր թէ՛ «Այս երկիրը քիչ առնելն Գաղ-
ղիոյ տեղութիւնը պիտի տրլէ և այն առնել ձեռ-
թէ՛ մեծերը և թէ՛ դուք իմ ձեռքն պիտի համբու-

նաւոր խնդրը, կաթողիկոսական խնդիրը:
—Եկեղեցին մի ազգի մէջ նրա բարոյական-
հոգեւոր աշխարհահայեցողութեան ար-
տայայտութիւնն է: Եկեղեցու կազմակեր-
պութիւնը հայելի է ազգի բարոյական-հո-
գեւոր զարգացման: Այդ կազմակերպութեան
առաջնորդութիւնը, ժամանակի պահանջ-
ման համեմատ նրա մէջ մտցնելով վերանո-
րոգութիւնները,—նշան են նոյն իսկ ազգի
առաջնորդութեան: Նոյն կազմակերպու-
թեան անշարժ մնալը, կամ նրա յետադի-
մութիւնը սկզբնական ձեւերից,—նշան է
ազգի անշարժութեան ու յետադիմութեան:
Այդ պատճառով եկեղեցու կազմակեր-
պութեան մի յայտնի բարձրութեան վրա
պահպանելը, նոյն իսկ նրա անընդհատ ա-
ռաջնորդութիւնը մի անհրաժեշտ պահանջ
է այդ եկեղեցուն պատկանող, նրա կրօնը
դաւանող ազգի համար, այդ ազգի բարո-
յական-հոգեւոր կեանքի, նրա բարոյական-
հոգեւոր առաջնորդութեան համար: Իսկ
եկեղեցու գոյութեան հետ, որպէս բարոյա-
կան-հոգեւոր հիմնարկութեան հետ, կապ-
ված են՝ ազգի հասարակական կեանքը,
ազգի հոգեւոր-վարչական կազմակերպութիւ-
նը, նրա բարոյական կրթութիւնը, նրա զըպ-
րոցական կեանքը, ազգային-եկեղեցական
կարեւորների դրութիւնը, որոնք իրանց ե-
կամունքներով ապահովանում են ազգի
կրթական գործը:
Ուրեմն ազգային եկեղեցու կազմակեր-
պութեան հետ կապված են բարոյական,
հասարակական, կրթական և անտեսական
հարցերը:

Եւ ամենայն հնազանդութեամբ: Կաթողիկոսը
վերստին կը բողոքէ կուսակալին, բայց կուսակա-
լը մոտիկ չընէր: Կաթողիկոսը կը գտնուէր կուսա-
կալին հետ և կը դիմէ Գրան: «Մասիս» իր կողմէն
կը յաւելու թէ՛ Կիլիկիոյ կաթողիկոսն հեռաւորա-
բողոքներ է Գրան այս հարցի մասին:—«Մասիս»-ի
այս թղթակցութեան տուեղութիւնը շատ տարա-
կուսական է: Իսկ ընդ շատ բաներ կան:—Տե-
սենք:—
Առնենք մը ի վեր Պօլսոյ հայերէն թերթերէն
ոմանք մասնաւոր հակառակութեան ոգի մը ու-
նին «Մշակ»-ի դէմ: Ով որ գծերուն մէջն կընայ
կարգալ, շուտով կը տեսնէ թէ՛ այդ հակառակու-
թիւնը պարզապէս նախանձու արդիւնք է: Այդ
նախանձուներուն պարզապէս է «Մասիս»: «Մե-
շակ» ամենայն աւելի ծանօտութիւն մատուց, կը
մատուցանէ, և պիտի մատուցանէ Թիբեթից հայոց,
ուստի բնական է որ այստեղի թերթերը չը հան-
դուրին «Մշակ»-ի: Սակայն քանի որ «Մշակ»
Թիբեթից հայոց օգտակար կուզէ ըլլալ և ոչ թեր-
թերուն, ուստի կընայ իր գործը շարունակել ա-
ռանց ասանց կարեւորութիւն ընծայելու: Ամենայն
աւելի «Թիբեթական» է (եթէ էջմիած-
նէն զգոյշ կենայ) որ բարեկամաբար կը շարժի
«Մշակ»-ի հետ և ստէլ կարեւորապէս «Մշակ»-ի
առաջնորդող և ուրիշ կարեւոր յօդուածներն: Առ-
այժմ այս նիւթերուն վրայ չենք խօսիր, երբ ու-
րիշ առիթ մը ըլլայ այն առնել կը գրենք ու հի-
մա միայն երկու նիւթի վրայ խօսենք:—
Պարզ օրինակ մը տանք թէ՛ ինչպէս կուզեն մա-
լորենիկ Թիբեթի ժողովուրդի դադախարներն
«Մշակ»-ի մասին: Անցեալներն «Մասիս» կը հրա-
տարարէր թէ՛ «Մշակ»-ի ծաւալման պատճառը
միայն ալ Բաֆֆիի վերադառնալն է: Իսկ «Մշակ»-ը
կարգաւոր, որ «Մշակ»-ը չը ճանաչէր և կուզէ
դադախար մը առնել Ռուսիոյ հայոց թերթերուն
վրայ, պիտի կարծէ թէ՛ «Մշակ»-ի մէջ ոչինչ կայ

Այդ բոլորն ուղղութիւն տալու համար
մեծ նշանակութիւն ունի թէ՛ ինչ կազմա-
կերպութիւն կուենայ այն հաստատութիւ-
նը, որին եկեղեցին են ասում, ուրեմն եկե-
ղեցու համար մեծ նշանակութիւն ունի թէ՛
ինչ կազմակերպութիւն ունի նրա կենտրո-
նական վարչութիւնը, ինչ կազմակերպու-
թիւն ունի նրա երկրորդական վարչու-
թիւնները, ինչ դիւր ընած ունեն հասա-
րակական կեանքի մէջ եկեղեցական հովի-
ւները, քարոզիչները, ինչ յարաբերութիւն
ունի եկեղեցին դէպի ազգի կրթական գոր-
ծը, որ բաղկացած է երկու օրգաններից,
դպրոցից և բեմասացութիւնից, այսինքն ե-
կեղեցական քարոզիչ: Կրթական գործի այդ
երկու ճիւղն էլ եկեղեցու ձեռքումն է. մի
կողմից դպրոցը,—կրթական նոր սերունդի
համար, միւս կողմից եկեղեցու բեմից քա-
րոզը և կրօնական զրքերի ժողովուրդի մէջ
մայրենի լեզուով տարածելը,—կրթական
հասակ առաձնների համար:
Այդ է պատճառը որ եկեղեցու զլխաւոր
պետի ընտրելը մեծ նշանակութիւն ունի
թէ՛ եկեղեցու համար և թէ՛ ուրեմն այն
ազգի համար, որ պատկանում է այդ եկե-
ղեցուն:
Նախ քան մեր համեստ կարծիքը յայտ-
նենք, թէ մեր համոզմունքով ինչ տեսակ
անձ պէտք է լինէր Հայ-լուսաւորչական ե-
կեղեցու գլուխ, մենք կուզենայինք մի թե-
թե անհրաժեշտ գցել Հայ ազգի մի քանի
պատմական յատկութիւնների վրա:
Շատ քիչ ազգերին է եղել վիճակված
ստեղծել իրանց ինքնուրոյն ազգային կրօն:

Հայ ազգը թէ՛ և երբեք չէ ստեղծել իր հա-
մար մի ինքնուրոյն կրօն, բայց Հայոց ազ-
գի հանձարին յատուկ է, ուրիշ ազգերից
վերցնելով կրօնը, իրանցիկ այդ կրօնը և
ստեղծել իր սեփական ազգային եկեղեցի:
Քրիստոնէութիւնը Հայերի մէջ զըսից է ե-
կել, քարոզվել է մեր մէջ լատին և յոյն
քարոզիչների ձեռքով, նոյն իսկ Գրիգոր Լու-
սաւորիչը Հայ չէր, օտարազգի էր,—բայց
երբ հայը մի անգամ ընդունեց քրիստոնէ-
ութիւնը, նա իրացրեց օտար կրօնը, կերպա-
րանափոխեց եկեղեցու կազմակերպութիւնը,
իր առանձնայատկութիւնները մտցրեց եկե-
ղեցու մէջ և ստեղծեց մի ինքնուրոյն ազ-
գային եկեղեցի: Նոյն ընդունակութիւնը
պահպանում է հայը և մինչև այժմ: Նոյն
իսկ Հայ այլադաւանները, Հայ-կաթողիկոսե-
րը և Հայ բողոքականները, ընդունելով ու-
րիշ կրօն, իսկապէս ոչ թէ օտար կրօնի հետ
են միանում, այլ ստեղծում են իրանց ազ-
գային կաթողիկ և բողոքական եկեղեցի: Ամ
բողջ աշխարհի կաթողիկ եկեղեցում չը
կան պատկաճ քահանաներ, իսկ հայը ըն-
դունելով կաթողիկութիւն, իր համար ար-
տնութիւն է ստացել ունենալ պատկաճ
տեղեկներ: Ամբողջ աշխարհի կաթողիկ
եկեղեցում ժամասացութիւնը լատինական
լեզուով է լինում,—իսկ Հայ կաթողիկ կա-
տարում է իր ժամասացութիւնը մայրենի
լեզուով:
Հայ-բողոքականն էլ իսկապէս ոչ թէ միա-
ցել է մի արդէն եղած, յայտնի բողոքական
եկեղեցու հետ, բայց ինչպէս և Հայ-կաթո-
լիկը, իր առանձին, ազգային գոյն է ստեղ-

իր նոր եկեղեցուն, որ քանի գնում է, հե-
տոցեւեւ աւելի և աւելի որոշ է դառնում:
Ինչ է եղել պատճառը որ հայերի մի
մասը, կարծես այլ ևս չբաւականանալով
իրանց լուսաւորչական եկեղեցուց, սկսել են
անշատով նրանից և ուրիշ դաւանութիւն-
ներն ընդունել:—այդ հարցը մենք այստեղ
առ այժմ աւելորդ ենք համարում շօշափել:
Միայն այդքանը կանանք, որ այն անհերքելի
իրողութիւնը որ հայը ընդունակութիւն ու-
նի եկեղեցական, ազգի այդ բարոյական-հո-
գեւոր հաստատութեանը իր ազգային, ինք-
նուրոյն բնաւորութիւնը յատկացնել մեզ ի-
րաւունք է տալիս ցանկանալ որ լուսաւոր-
չական եկեղեցին, ազգի մեծամասնութեան
եկեղեցին, պահպանէր այն մաքուր բնաւո-
րութիւնը որ ունէր սկզբից:
«Մշակ» հրատարակութեան առաջին
տարիներին, երբ առիթ էր լինում խօսե-
լու լուսաւորչական եկեղեցու մասին,
մենք միշտ այն միտքն էինք յայտնում որ
մենք շատ բաներում հեռացանք սկզբնա-
կան լուսաւորչական եկեղեցու բնաւորու-
թիւնից և, ի հարկէ, եթէ ցանկալի է ազ-
գային եկեղեցուն ունենալ իր ազգային բը-
նաւորութիւնը, ուրեմն և ցանկալի է նրան
վերադառնալ այն կազմակերպութեանը, որ
նա ունէր իր սկզբնական, մաքուր դրութեան
ժամանակ:
Եւ այդ ցանկալի պէտք է լինի նոյն իսկ ազ-
գի այն մասի համար, որ երկիւղով նայում
է ազգի մէջ այլ և այլ կրօնների բազմաւալու-
մբ: Եկեղեցու կազմակերպութեան վերանոր-
ոգութիւնը սկզբնական, լուսաւորչական մա-
քուր եկեղեցու բնաւորութեանը համեմատ,
անշուշտ արդելք կը դնէր ազգի մէջ հերձուած-
ներն ու այլ և այլ ազանդների բազմաւալում:
Այդ է պատճառը որ ցանկալի է կա-
թողիկոսական աթոռի վրա տեսնել մի լու-
սաւորութեւն անձնաւորութիւն, որ հասկանա-
րէ ինչ է պատճառը որ հայերի մէջ հեռոգ-
հեռեւ բազմաւալում են այլ և այլ ազանդներ
և որոնք այդ երեւոյթի պատճառը ոչ թէ
Փանատիկութեան, ատելութեան մէջ, այլ

նոյն իսկ մեր սեփական անընդունակութեան
մէջ առաջն առնել մեր մէջ ազանդների
տարածմանը:
Գերմանացի գիտնականներին մին, որքան
յիշում ենք, քաղաքատնտես Բօշէր, յայտ-
նել է հետեւեալ իրաւացի միտքը:
«Երբ որ մարդս ուզում է մաք առել
իր թշնամիների դէմ,—նա պէտք է նրանց
թող իրողութիւնը ուսումնասիրել: Բայց երբ որ
նա ուզում է յաղթել իր թշնամիներին,
նա պէտք է ուսումնասիրել իր թշնամիների
լաւ կողմերը և իր անցի, իրան սեփա-
կանացին իր թշնամիների այդ լաւ կողմերը:
Մենք նոյն մտքին էինք հետեւում, երբ
առաջարկում էինք լուսաւորչական եկեղե-
ցուն, օտարադաւան հայերի հետ մաքառե-
լու համար, ընդունել նրանցից այն լաւ
կողմերը, որ մենք ինքներս չունէինք, կամ
կորցրինք: Նախ թարգմանել աւետարանը
ազգին հասկանալի, մայրենի, կենդանի լեզ-
ուով, պատրաստել լուսաւորութեւն և նիւթա-
պէս ապահոված քահանաներ, քարոյչներ,
ինչպէս մեր հակառակորդներն ունեն, կաղ-
մակերպել մի լուսաւորչական միասնարական
ընկերութիւն: Իսկ հալածելով, ծեծելով,
ջարդելով, ծաղրելով ու անպատեւելով կա-
թոլիկ, բողոքական կամ մահմետական հա-
յերին,—բան չի դառնայ: Խօսքի դէմ խօս-
քով, գաղափարի դէմ գաղափարով կարելի
է միայն մաքառել: Այդ տեսակ հարցերը
ապագայ նորընտիր կաթողիկոսը կարող է
վճռել միմիայն մեծ եկեղեցական ժողովնե-
րի օգնութեամբ, որոնց մէջ հին հայոց
եկեղեցու աւանդութեամբ իրաւունք ու-
նին հաւատարմաւ մասնակցել և հոգե-
ւորականները և աշխարհականները: Այդ
տեսակ ժողովներ վաղուց է որ տեղի չեն
ունեցել հայերի մէջ:
Հետեւեալ անգամ կաշխատենք մեր միտքը
պարզել թէ մեր կարծիքով ինչ անձնաւո-
րութիւն պէտք է լինի ընտրելի կաթողիկո-
սը, ինչ գաղափարների տէր մարդ պէտք է
լինի, ինչ ձևով պէտք է վերաբերվի դէպի
ազգային եկեղեցու հաստատութեան հասա-

րակին, կրթական և անտեսական կող-
մերը:
Հասարակական ստեղծութիւնը հասարա-
նում ենք եկեղեցու վարչութիւնը, կրթա-
կան կողմը,—գաղութն է ու քարոզչութիւնը
կրօնական գրականութեան հետ միասին,
վերջապէս անտեսականը,—ազգային եկե-
ղեցական կալուածների կառավարութիւնն է:
Գ. Ա.
ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ
ՆԱՄԱԿ ԲՈՒԹԱՅԻՆՅՈՒՆ
Փետրվարի 26-ին
Հայոց առաջին ընդհանուր ուսուցչական ժո-
ղովը մի կենդանի պատկեր էր մեր տարրական
ուսումնարանների և նոցա մէջ գործող անձանց-
այս ժողովում դիտող կարող էր հետևից փոքր
ի շատեղ գաղափար կաղմել թէ մեր ուսումնարանա-
կան-կրթական ներկայ վիճակը մանկավարժական
գիտութեան օր աստիճանի վրա է կանգնած: Նոյն-
պէս մենք տեսնելով թէ որքան անպատրաստ էին դե-
ղական ուսուցիչները, բայց, այնու ամենայնի, դե-
տա-թեան այդ ճիւղին վերաբերեալ մի քանի նուե-
րեալ անձանց շնորհիւ գործը որոշակի դոյնով էր
ընթանում: Թէ գործնական և թէ տեսական նիւ-
տերին: Վերջապէս այդ առաջին ժողովը, բայց
գործողաբար հրապարակօրէն ոչ ճշ պլ ևս ձայն
չէր հանց նրա պակասութեանց կամ յատկութեանց
մասին, որպէս զի ապագայում պակասութիւնները
ուղղելիք, դուրսէ հիմնով կայն մտքի վրա, որ
միայն հինգ այն մտնեցաւ ամիսներում պարտա-
կան ենք լրացութեամբ խօսել նրա պատրաստա-
կանութեանց մասին: Լաւ է այդ գործի մասին
տարիներով առաջ խօսել մշակել, մտածել և ա-
պա հրաւիրել ամենքիս լուրջ միտքը արտայա-
տելու կրթական գործերի արդիւնաւոր ելքի հա-
մար: Նոյնպէս մեզ յայտնի է, որ կազմակերպ մի
յանձնաժողով 35 անձնակազմով, բաղկացած, ո-
րոնց ընդհանուր ժողովը պարտաւորեցրեց կաղմել
մեր ներկայ ծխ. ուսումնարանաց վիճակին յար-
մար մի նախադիմ, բայց մինչև այժմ չենք իմա-
նում թէ աշխատանքը օր աստիճանին են հասց-
րել: Թէ ինչու այդ մասնաժողովի անունը յիշե-
ցինք այստեղ ընթերցող ներքեի տղերքովս կի-
մանայ:
Մենք, ուսուցիչներս հետացանք ժողովից, ի

հարկէ, կիսամարս մաքերով, մեր ականջները
մտան բազմազան մաքեր, վճռողութիւններ
մանկավարժական դասազան տերմիններ, կրկնու-
եմ, բայց անպատրաստ լինելով, մեր գիւղական
թերուս ուսուցիչները անշուշտ մի մտաւոր պա-
տեհազմ կը լինէր նոցա զիններում մինչև որ
մեթօքները մէկն ու մէկը կը վռնդէր զինիցը
Այս էլ կասեմ, որ ժողովը գործեց աւելի քան
լինէր մեր ազգի ներկայ վիճակի աստիճանի վրա:
Յիշեալ ժողովում շատ խօսեցին դասաւար-
թական եղանակների մասին, շատ վիճեցին, բայց
նչ մի հմուտ և փորձված մանկավարժ օրինա-
ւոր ուղարկութիւն չէր դարձրեց և չէր խօսեց ա-
ղծաւորութեանց վճռողութեան մասին թէ Վրաս-
տանի և Իմլիթի հայոց ծխական ուսումնարան
ներում սկզբնական դասերը ինչ յառաջադիմ
թեան կամ յետադիմութեան են հանդիպում, կա-
նչպէս պէտք է խորտակել այն խոչը և խոթը
որոնք պատահում են անփորձ ուսուցիչներին
տարախօս մանուկներին դասաւարդելիս, ման-
կան գրագիտութեանց առաջին դասերին: Արդ
կը խնդրեմ իմ յարգելի համապատասխաններ
որոնք հայոց լեզուի սկզբնական դասեր են
լսողներ օտարախօս հայ մանկանց, որքան կը
են հետապօսեն, մշակեն այն բոլոր ձևերը և
գրութեւն եղանակները, որոնք աւելի հեշտա-
նում են և նպաստում թէ ուսուցչաց թեթեա-
լութեանը և թէ սաների յառաջադիմութեան
լաւ կը լինի եթէ ամեն օր ևս կարճաւոր
պով նշանակեն իրանց յիշատակարանում
Այս ոչ թէ միայն Վրաստանի հայ ուսուցիչնե-
րին է վերաբերում, այլ և այն բոլոր ուսուցիչնե-
րին, որոնք հայ-օտարախօս մանկանց կրթու-
թեան պաշտօնին են նուիրված: Եւ էլ արդ
եւրեք տարի է իմ կարողութեանս համեմատ շա-
ռաւորութեամբ եմ հետեւում այս փափագելի նշ-
պատակիս: Արդեմ, մեր հայ պատուական ամա-
գիւրներն էլ մեծաւ ուրախութեամբ հիւրընկալե-
ղանազան անձանց գործ գրած միջոցները և ոչ
ստղութիւնները:
Այս հարցիս վերաբերեալ միջոցների մասին
ներկայումս ուսումնականավարժական աշխարհում
խօսակցութեան մեծ առաքիլայ է դարձել—մասն-
աւոր ֆինլանդական ուսումնարանական բա-
նում:

Յ. Ամիրաղան

մէջ ալ կարողութեան տէր երիտասարդներ որը
մի բաժնակից ձեռքի կարօտ են:—Այս մեր դը-
րածը կարճաւոր գաղափար մը կուտայ թէ ինչ
ուղով կը ձանչցեն «Մշակ»-ը Թիւրքիոյ հայոց:
Գաւթ ուրիշ կէտի մը և ցոյց տանք թէ ինչպէս
քննադատութեան կենթարկուին «Մշակ»-ի յո-
ղաւանները:
Երբ հրապարակադիր մը քննադատութեան պի-
տի ենթարկէ թերթի մը ուղղութիւնը, իր առա-
ջին պարտաւորութիւնն է լաւ ուսումնասիրած
ըլլալ այդ թերթի ուղղութիւնը և գրած յօդուած-
ներն զանազան նիւթոց վրայ և ոչ թէ խնդրե-
լիս քննել: Ասիկէ զատ կարծեմ բոլորովին աւե-
լորդ չէ՛ք դատել թէ քիչ մալ տրամաբանու-
թիւն անօրոտ չէ, գէթ այնչափ քանակութեամբ
տրամաբանութիւն որ հրապարակադիր—քննադա-
տը ծաղրելի չըլլայ ինքն, երբ կուզէ դիմացինը
ծաղրել: Տարրական ճշմարտութիւններ են ասոնք
այնպէս չէ, սակայն վեր առնենք Պօլսոյ «Հայրե-
նիք» թերթի փետրուար 8-ի թերթ, որուն մէջ պ.
Խաչիկ Սարաճ կուգայ քննադատել «Մշակ» ուղ-
ղութիւնը և պիտի տեսնենք թէ այս տարրական
ճշմարտութիւններն աւելորդ դարձ համարուած
են: Պ. Խաչիկ Սարաճ երկար տարիներ են «Հայ-
րենիք» մէջ յօդուածներ կը հրատարակէ, այնպէս
որ կրնայ այդ թերթի գլխաւոր աշխատակիցը սե-
պուր: Մի քանի անգամ առիթ ունեցանք յիշա-
տակել իր անունը, բայց կը յիշէք: Չեմ պնդեր
որ այն հարկաւոր անուններն որք կուզան կը
գործեն, կը գրեն, կը մնան, կրթական ամենուն
անուններն մտքերնիդ պահէք, թէպէտ և կը գը-
տնուին սղարկութեան որք կը կարծեն թէ ա-
նուն մը մի անգամ հրատարակուի թերթի մը
մէջ անմահութեան պատիւը ընդունած է: Օր մը
Ռուսաստանից հայտն մը հանդիպեցայ, առաւու-
րի համար Պօլսո կեանք էր: Երբ իր անունը տուաւ
և ըսի թէ չեմ յիշեր, ապեցաւ: «Ինչպէս չես յի-
շեր»

չեր, բաւ գարմայնամբ, «Մշակ» մէջ նամակ մը
հրատարակած եմ մեր դիւրի վարժապետին հա-
մար: Մենք ալ չենք գիտեր թէ մեր յիշած
մէկ քանի անուններն կը տպաւորուին ձեր
մտքի մէջ: Պ. Սարաճ այն հրապարակադիրն է որ
կը համոզէր հայ կղերք քարոյչը թէ «Արտաքոյ
Հայաստանաց» եկեղեցու չիք փրկութիւն հո-
գոյ:—Իր յօդուածներուն ներքե կը դնէր ջրհե-
ղեղի թուականը: Հիմա տեսնենք թէ պ. Սարաճ
ինչպէս է իր մտածութիւնները կը հաղորդէ հայ
ժողովրդին «Մշակ» ուղղութեան առիթ:
«Պ. Գրեգոր Արքեպիսկոպոս «ուղղութիւն» կար-
գայնքը «Մշակ» թիւ 1 թուոյն մէջ:
Այդ ուղղութեան մէջ քննադատելի շատ կէտեր
կան, որոց մէջ հետեւեալ կրնանք նիւթ ընել մեր
քննադատութեանցը:—Այս կարող յառաջադրանքն
վերջ պ. քննադատը իր քննադատութեանց առա-
ջին նիւթ կընէ «Մշակ»-ի սա համոզումը թէ
թիւրքաց Հայաստանի իրաւունքներն ձեռք չեն
բերուիլ եթէ Պօլսոյ հայոց Ազգային ժողովը չը
տեղափոխուի Հայաստանի քաղաքներէն մին, օրի-
նակ Կարին կամ Վան:—Լաւ, այս համոզումը
պաշտպանել կամ հերքել ազատ է հրապարակա-
դիրը, սակայն ինչ կընէ պ. Սարաճ. ահա իր խօս-
քերն. «Մշակ» այդ սքոլաստիկ (գաղութական)??
ծրադիրները նոր չէ, շատ անգամ կարողացել եմք,
բաւական առատ ծիծաղի նիւթ մատակարարած է
մեզ, ինչպէս որ այս անգամ ևս մատակարարեց
Հէյդըլբերգի դոգմորին այդ ծիծաղելի վճիռը:—
Այս սքաւիտ խօսքերէն վերջը ինչ կը յուսաք որ
աւելցնէ հայ Ազգային Բարձր: Երեւակայեցէք: Բայց
նչ, որչափ ալ դժբաւոր երեւակայութիւն մը ունե-
նաք, դարձեալ կարող չէք երեւակայել, ուստի յա-
ռա՛ջ երեւեք իր խօսքերը: «Պ. Գրեգոր Արքե-
պիսկոպոս» ունի պէտք է գիտնալ որ իւր բաժնը
մեր ամենուս ուղղած բանն է: Երեւակայելի
եթէ պ. Արքեպիսկոպոս ըսածը ձեր ամենուրեք ուղածն
կուր ասոնց ետեւն:

է, ուրեմն դուք ամենք ալ ծաղրելի չէք եթէ նա
ծաղրելի է:—Ըսել է որ հրապարակադիրն ալ
կրնային «Մշակ»-ի սկզբունքը: Սակայն պ. Սա-
րաճ այս սկզբունքին օգտակարութիւնը ընդունե-
լով դժուար գործադրելի ըլլալը առաջ կը քշէ:
Այդ ուրիշ խնդիր է: Հայաստանի ինքնօրինակութիւն
պահանջելն ալ վերջին աստիճանի դժուար խնդիր
մէ, բայց միթէ ծաղրելի եղան անոնք որ պա-
հանջեցին այդ ինքնօրինակութիւնը: Ողբալար գործ
մը մեծամեծ դժուարութիւններ կրնայ ունենալ,
բայց երբ այդ գործին օգտակարութիւնը հաս-
կցուած է, խնայտուել այն է որ հետամուտ կըլլայ
այդ դժուարութիւններուն յաղթել աստիճանա-
բար: Ամենքս ալ կըմտնենք թէ «Մշակ»-ի այդ
սկզբունքին դէմ կրնայ մաքառուիլ կամ նա կըը-
նայ ընդունուիլ: Բայց երբ ընդունուի այդ գաղա-
փարին օգտակարութիւնը, զայն ծիծաղելի անուա-
նեն, այդ ըմբռնել մեր կարողութիւնն վեր է:
Պ. Սարաճ կը կարծէ անյաղթելի փաստ մը
գտած ըլլալ երբ կըսէ, «չի պիտի կարենայ (պ.
Արքեպիսկոպոս) ոչինչ իրաւունքի հասնել, կը յարեմք
և մեք ի կարգին, մինչև որ իւր տպարանը, մա-
մուլը չի հաստատէ ի կարին կամ ի Վան, ուղ-
ղակի Հայաստանի կեդրոնէն ներգործելով Ար-
մինիայի ողորմելի ժողովուրդի վրայ:—Ի՞նչ ըստ
ասանկ բաներ դրոյն: Այլ է Հայաստանի բարե-
կարգութիւն, այլ է Ազգ. ժողով, և այլ է օ-
րաթերթը: Հարկեր հատ օրաթերթ կրնանք
հրատարակել, բայց Ազգային ժողով երկու
հատ չենք կրնար ունենալ, ինչ տրամաբա-
նութեամբ ասոնց մէջ բաղադրութիւն ընել:
Հայաստանի մէջ հայերէն թերթեր հրատարա-
կելը կարեւոր է, իսկ այդ կը նշանակէ Պօլսոյ
թերթերը խափանել: Մեր Հայաստանը օրաթեր-
պէտք ունի, բայց միթէ Ռուսիոյ հայերը կարօտ
չեն թերթի: Իսկ քիչ ըսել թէ ձգէ ասոնք և և-
կուր ասոնց ետեւն:

Ասոնցմէ վերջ պ. Սարաճ սա կէտն ևս կը լինի
թէ «Մշակ» կը յայտարարէ որ Թիւրքիոյ հայե-
րուն կը պակսի հիմնաւոր կրթութիւն: Ասոր ինչ
պատասխան կուտայ, դիտել, ահա իր խօսքերն
«մենք չենք ըսեր թէ մեր կրթութիւնը դէնիկ
հասած է, բայց ի վերայ այս ամենայնի մի
մէջ ալ պակաս չեն հիմնաւոր և համալսարանա-
կան կրթութիւն առնողներ:—Բայց միթէ ժող-
վուրդը մը մէջ մի քանի անձնիք ըմբռնել կա-
մատաւարան եղած են որովհետեւ, դա կը նշանակէ
որ ժողովուրդը հիմնաւոր կրթութիւն առած է: Այլ
է ժողովուրդին հիմնաւոր կրթութիւն տալը, այլ
անոր մէջ մի քանի համալսարանական դոմնութիւն
—Պ. Սարաճ կը շարունակէ. «Բայց այս կէտը
մէկ կողմ դնենք, ուստահայոց մէջ հարկաւոր
հաղաւոր համալսարանական կրթութիւն առ-
նողներ կան, կը լսենք, ձեռ են այդ երանելիներն
ինչ գործ ըրած ունին, ձեռ է իրենց գործոց ար-
դիւնքը, յորս ստանաւիրտ և անտարբեր մարդիկ
քիչ բացառութեամբ գերազանցապէս կը խալիկեն:
—Երբ պ. Սարաճ այս տղերքը գրած է անշուշտ
մի քանի անգամ լաւ կարգադրած է քէ քիչ գաղթ
թէ նայենք ասոնց ինչ պիտի ըսուի: Սակայն իր
գծադրութիւնն է որ «Մշակ» քննադատելու
կեղծ առանց «Մշակ» ձանչցած ըլլալու: Միթէ
համալսարանականներու այս ընթացքը դէմ մարտ-
չողը «Մշակ» ինքը չէ, այնքան յօդուածներ չէ
հրատարակած, ուրեմն ինչ կը նշանակէ հիմա
եւել «Մշակ»-ի մեղք գրել համալսարանականաց
եւել «Մշակ»-ի մեղք գրել համալսարանականաց
չէ որ գիտցածին չը գիտցածին մէջ կը նետուի:
Մենք անցանքերը լսեցինք թէ մի ծերունի թեր-
թակից, որ պ. Սարաճի երկու տարիքը ունի, հաս-
կը պանծայ եղեր թէ «նայեցէք ևս ինչ խաղ պի-
տի խաղած Հայկական որ ինքն ալ երթայ խաղ-
ատակ ըլլալ և ալ չը գրէ»:
—Աման, դոքեր, քուսում դոքեր, ըսէ նա-

Дозволено, Тимоте, 2

